

ԳՐԱԿԱՆ

ԻՆՏՐԱՅԻ «ՆՈՃԱՍՏԱՆ» ՍՈՆԵՏԱՇԱՐԸ

Հարցերը, որոնք շօշափուած են Ինտրայի «Նոնաստան» քանաստեղծական ժողովածուում, նորութիւն չեն: Այդ հարցերին հեղինակն անդրադարձել էր «Ներաշխարհում»: Սակայն քանաստեղծութիւններին այս փոքրիկ ժողովածուում, որը ներքին թեմատիկ-գաղափարական կապով «ներաշխարհի» շարունակութիւնն է, «Ներաշխարհի» գլխաւոր հերոսը՝ ներքին ես-ը, հետաքրքիր հոգեբանական զարգացում է ապրում:

Ի հակադրութիւն «Ներաշխարհի» ես-ի, որն աշխարհն ընկալում է պատանեկան խանդավառութեամբ եւ յոյսերով, «նոնաստան»ում ես-ը փորձառու է՝ հասած թէ՛էնեանական «տրտում գիտութեան»՝ հոգեւոր հասունացման մի բարձունքի, որից միայն վար են նայում եւ ծիծաղում աշխարհ-բեմի եւ դերասանների վրայ, որոնցից մէկն էլ սեփական անձն է, սակայն Ինտրայի «Նոնաստանի» փնարական հերոսը՝ ներքին ես-ը, այնքան փորձառու է, իմաստուն, որ նիցշէական «գուարթ գիտութեամբ» (1) անգամ չի կարող ծիծաղել վար նայողի հոգեբանութեամբ: Նա իր հոգում չի կարողանում յաղթահարել կեանքի ցաւը. նրա հոգու խորխորատներում տեւական պատերազմ է:

«Նոնաստան» (նոնին իբրեւ Աիդի սրբազան ծառ եւ վերանցականի անդրանցականի խորհրդանիշ) (2) վերնագրուած փիլիսոփայական այս սոնետաշարի փնարական հերոսը (ի հակադրութիւն «Ներաշխարհի» ես-ի) հոգեւոր, ինտելեկտուալ, բարոյական հասունացման մի նոր որակ է ձեռք բերել: «Ներաշխարհում» առաջ քաշուած բարոյական կատարելութեան հարցը, որ սկսւում է անձի ես-ից եւ ծաւալւում

մինչեւ համայնական, համագոյ ես-ը, «Նոնաստան»ում՝ վերանում, վերածում է ես-ի՝ ինքնակատարելութեան հասնելու ուղու փնտրեան, որին հասնելով միայն՝ մարդը կարող է միտել հոգու խաղաղութեան՝ յաւերժում լուծուելով: Եթէ «Ներաշխարհը» ներթափանցուած է անսահման լաւատեսութեամբ, նոյնը չի կարելի ասել «Նոնաստանի» մասին: Թուում է, թէ լաւատեսութեան հականիշն այս պարագայում եւս պէտք է լինի յոռետեսութիւնը: Սակայն «նոնաստանի» փնարական հերոսը յոռետես չէ, նա ոյալիստ է՝ իրականութիւնը շատ սքափ եւ խոր տեսնող, ընկալող, վերլուծող, այնքան խոր, որ այդ նանաչումը վերածում է տեսանողութեան: Ինտրայի փնարական հերոսը, որ աներկբայ քանաստեղծի ես-ն է, իր էկզիստենցիալ՝ գլոբալ, տարածական մտականուցումով է զննում աշխարհը (3):

Շարքում շօշափուած հարցերի սոսկ թուարկումն իսկ կարող է պատկերացում տալ փնարական հերոսի՝ իրական, օբյեկտիվ, էկզիստենցիալ աշխարհընկալման մասին: Նա բզկտում է ներքին երկուութիւնից, երկփեղկումից. այդ ինքնաձաղկման խորքում, այդ ներքին կոնֆլիկտի խորքում ծանր շնչառութեամբ, մոռյլ հեւեով նստած է մահուան գիտակցութիւնը: Ի հակադրութիւն մահուան՝ որոնում է կեանքի իմաստը, որը յանգեցւում է, կրօնական իմաստով, անմահութեան, յարութեան երազանքի: Կեանք-մահ-յաւերժութիւն, - փիլիսոփայական այս տիրոյթում են փնտրում հարցերը, եւ փնարական հերոսը փիլիսոփայական կամ որեւէ այլ միջթարիչ պատասխան չի փնտրում, նա

գարթնած է, նա հոգեւոր հասունացման այն «բարձր լեռներին» կատարին է, որին հասնելով՝ լցւում են «տրտում գիտութեամբ» եւ բարձր քրիշնով՝ սեփական անձի եւ աշխարհի վրայ: Քնարական հերոսը մահուան ելակէտից մոռյլ խորհրդածում է իմացութեան պատճառած ցաւի շուրջ, աւելի շուտ՝ քղթին է յանձնում իր տառապանքը, ցաւը, ինքնապատեւագմը, որ բխում է աշխարհին իջած «մոռյլամած նշմարտութենէ մը»(4): Եւ քանի որ կայ մահը, մարդկային կեանքի իմաստը բանաձեււում է որպէս ինքնանաւազման, ինքնակառուցման, ինքնարարման ուղի:

Քնարական հերոսի սիրտը կեղեքւում է մարդու անցողիկութեան ցաւից, եւ ինքնագիտակցող անհատը երագում է յարութիւն, անմահութիւն յոյս: Սակայն «Նոնաստանի» ես-ը՝ որպէս բնութեանպաշտ, սթափ գիտակցում է, որ դա միայն երագանք-անուրջ է, իսկ իրականութիւնն այն է, որ մարդը կորչում է հողում, իսկ հոգին՝ լուծւում անսահմանութեան, անվախճանի մէջ: «Ներաշխարհում» աշխարհի հետ քացուած վէճն այս բանաստեղծական ժողովածուում ստանում է նոր որակ: Եթէ «Ներաշխարհն» անսահման սիրոյ փառաբանութիւն է, այստեղ հասուն անհատը՝ իրական կեանքն ապրածը, ում երագանքները, անուրջները շրջուել են իրականութեան ցաւից, սարսափով խորհում է, թէ տիեզերական այն այգը, լուսաբացը՝ Քրիստոսով յարութեան առաւօտը, որին բաղձում է հէգ հոգին, եթէ սին է ու դատարկ, ինչպէս նիւթական կեանքում անուրջները, ուրեմն՝ Լաւ է փշոց հետ գլխիկոր չֆանալ այժմէն:

(«Աշնան երգ» էջ 214)

«Աշնան երգ» վերնագրուած այս բանաստեղծութիւնն իր բնակարային

գոյներով տերեւանական «Գիշեր եւ յուշեր»ին հոգեհարազատ մի ապրում է: Զարթնած, իրականութիւնն իր գոյներով ընկալողի համար հոգու աշուն է կամ հոգու գիշեր:

Փիլիսոփայական սոցետների «Նոնաստան» ժողովածուն քացւում է «Վերադարձ» բանաստեղծութեամբ, որում նոնիներին վերադառնալն ստանում է խորհրդանշական բնոյթ. նոնիները «Ներաշխարհի» նոյն նոնիներն են, որոնք խորհրդանշում էին երկիր - երկինք, մարդ - անսահմանութիւն, երկրային կեանք - յաւերժութիւն, ներքին ես - վերանցական, համագոյ ես փոխանցումը: Նոնիները դառնում են յաւերժութեան խորհրդանշիչ («Յաւերժութիւն», «Դարվեր»), որ միտում են դէպի տիեզերական եթեր, դէպի Անվախճանը: Անսահմանին ձուլուելու, անէանալու ուղիով այդ սլացքը ենթադրում է յանգում հոգու խաղաղութեան («Պայծառ օր», «Հովին մէջ», «Պաշտամունք»): Այս երգերում ուրախութիւն, լոյսի ծփանք չկայ: Տիեզերական յաւերժութիւնը կարծես անտարբեր է մարդու լինելիքի նկատմամբ: Մի շարք երգերում մահուան ցաւը, սարսափը, անսփոփ թանձր թախիծը մութ դող են փոխանցում ընթերցողի հոգուն («Նուագի ձայն», «Իդ»), ինչպէս Ե. Տէմիրճիպաշեանի «Անգղը». նոնիների անտառակից լսուող անուշ մեղեդին թունաւորում է ագռաւների՝ մահը խորհրդանշող կոնիչով:

Գերաշխարհի տեսիլներով լի, յաւիտեան հաւատարիմ վեհ անուրջին՝ գիշերային աղջամուղջում նոնիները լուռ երագ են հառաչում Անհունի մէջ: Բայց ողբագին վայում է մի բու, որը խորհրդանշում է իմացութեան վայումը մարդկային հոգում. «Խաւարակեաց մտածութիւն մը սրաչուի» բուի պէս միապաղաղ վկայում է մարդու ներսում

(«Բուն»): Արթնացած միտքը շարունակ տանջում է «վաղանցութեան իր ցաւովն» («Իդ»): Մեռած յոյսերի գերեզմանոցից նոնինների պէս դէպի Անանքը յառնած «եսը լիուն» նման է բացուող այգի ֆոնի վրայ աւելի «պիշ ու մռայլ» դարձող նոնինների, քանի որ երազներից լիութեան հետ ռէ նիւրբանան կը փրկի, ռէ էլ որբուէ երկնային Հայր («Նոնեքուն պէս»):

Քնարական հերոսի հոգին չի յագեցնում «անանց իրերէն»՝ գեղեցիկից, այնինչ՝ շուրջը միայն անցողիկութիւն է, քայքայում: Նոնինները յաւերժ պաշտ են դէպի Անդեանականը: Ցնորք է ամէն բան, ինքնախաբեկանք: Մարդը մահացու է.

... որս մ'ես դուն անսխալ ջնջման:

(«Ցնորք», էջ 226)

Մարդու մահկանացութիւնը պարտադրում է յաւերժական կեանքի երազանքի, սակայն երկնանուէր ընտրեալների շարքն այնքան էլ ստուար չէ: Եթէ նոնիններն անդրահայեաց, այսրատեաց, գերերկրեայ հոգիներ են, որոնք միտում են «մայր խաւարին լուսադրիր»՝ աստուածային տիեզերական Օրէնքների վիհը, կոյր սխալների կալանաւոր մարդը խարխալում է կասկածանքներում («Ցաւ»): Լուծուելով նոնինների հզօր սոսափիւնի մէջ՝ քնարական հերոսը փորձում է փախչել ինքն իրենից («Օրոր»), ճշմարտութեան իմացութիւնից, անյուսութիւնից: Սարսափելի եզրայանգում, չկայ վերերկրային կեանք, ուստի է միայն գեղեցիկը, որն, իրրեւ պատրանք-երազանք, փոխարինում է ճշմարտութեան գիտակցման տառապանքին:

Արուեստը սիմվոլներում փակուած ծանր ճշմարտութեան վեհացումն է, խաբկանք եւ ինքնօրորում («Մահիկը»): Եթէ «Ներաշխարհում» եսը մարդու անցողիկութեան, մահուան գիտակցութեան տառապանքից մղում

էր դէպի իրական կեանքի հեթանոսականութիւն՝ եթերային սիրոյ խորհրդանշ իռեան, ինչպէս Շանթի «Հին աստուածներ»ում՝ Արեղան, որը գերադասեց կեանքի ծովը՝ իր մռայլով եւ սիրոյ լոյսով, ապա «Նոնաստանի» քնարական հերոսը, որը հոգեբանօրէն աւելի հասուն է եւ ձեւաւորուած անհատականութիւն, յիշեցնում է Վանահօրը՝ իր «լեռան» քարձունից վար նայող: Եւ նա եւս Վանահօր պէս կարող է մարդկութեանը կոչ անել՝ գտնել ինքն իրեն, գիտակցել սեփական գոյութեան իմաստը՝ ասելով. «Մինչեւ հոս կարելի է մարդը բերել, քայց հոսկէ անդին մարդ ի՞նքն պիտի երթայ» (5)

Ճշմարտութեան որոնման ուղին իմաստունին հասցնում է սեփական հոգու «քարձր լեռներ», որից վար նա տեսնում է երեք ուղի՝ ոչնչապաշտութիւն, որն ինքն կործանում է, դէպի Աստուած կամ Անեղութիւն եւ դէպի գերմարդ: Եթէ շանթեան Վանահայրը, որ գիտակցում էր, թէ «մինչեւ հոս կարելի է մարդը բերել», յոյսը դրած մարդու վրայ՝ ձգտում է ինքնաբարձրման, Ինտրայի «Նոնաստանի» իմաստունը փորձում է թանձր իրականութիւնը խեղդել դէպի Անեան ու Անհունը հաւատի պատրանք-անուշանքում: Այսինքն՝ քնարական հերոսը մահուան գոյութեան ցաւից «մեռնում» եւ «յարութիւն» է առնում՝ փառաբանելու յարութեան երազանքը: Մահ - կեանք - սէր - ցաւ յաւերժական պտոյտը Ինտրայի «Նոնաստանում» իմաստաւորում է տիեզերական լոյսին ձուլուելուն արժանի լինելու եւ յարութեան վերադարձով անմահանալու նոր նրբերանգով:

«Նոնաստանում» ծաւալուում է թախծաշաղախ երազանք-անըջանքի մի երգ, լոյսի փառաբանութեան երգ. մեծարեցեան լուսառատ, ինտրայական

«խաժասփիլո» գիշերը նոնիների լուսեղէն կարօտն է եւ նաեւ քնարական հերոսի հոգու կարօտը, լոյսն իբրեւ հոգու կարօտ: Ողջ տիեզերքը ծփում է տաղի մեղեդիով, աննառ Լոյսի դէմ խեղճ աղջամուղջը ծունր է իջել, նիւթը՝ դարձել աղօթք («Լուսնագիշեր»): Իջնող երեկոյի շշուկները «գաղափարների անթարշամ կեանքին»՝ մեծ խղճմտանքին յարելու գուգորդումներ են ծնում («Երեկոյ»): Արշալոյսի լոյսերի մէջ վերասլաց նոնիներին իրենց գոյութեամբ գուգորդում են մէկ այլ միտք. «Ճշմարտութեան գութը» կամ յաւիտենական կեանքի յոյսը աներկբայելի են («Արշալոյս», «Ճագումը»):

Լուսահայեաց նոնիները շարունակում են մնալ ձեւերի՝ նիւթից դէպի հոգի վարից վեր յաւիտենական փոխանցման սիմվոլ: Վարի հանդիմանքից, ցաւից, մորմոքից, վաղանցկութիւնից կեանքի, յաւերժականի խորհրդանիշ նոնիներն անմասն են եւ «դէպի վեր կը պակնուն միայն»՝ մխրճուելով աղամամութի մէջ: Այդպէս էլ մարդու հոգին պիտի փնտռի խաղաղութեան ուղին, որը նա ստանում է Քրիստոսի ծննդեամբ: Մարդկային հոգու «թիւր ու մոռյալ... ձորերուն խորքէն» իր ծննդեամբ Քրիստոսը բերում է Ստուգութեան Ուղի, իսկ նոնիներն օրհներգում են. «Օրհնեա՛լ է սէրն ու նանաչումն Օրինաց» («Ծննդեան գիշեր»), օրինաց, որ Քրիստոսն ինքն է՝ որպէս փրկիչ, օրէնք, դուռ, ուղի...: Սակայն այս որոնումը, յանգումը Քրիստոսին, վերջնական չէ, ներքին երկփեղկուած հս-ը շարունակ հակասութեան մէջ է. երազ-անրջանքը զարթնածին այլեւս խաղաղութիւն չի կարող բերել, կասկածը պառակտում է նրա հոգին: Եթէ չկայ հոգու անմահութիւն՝ «յարակեանքն երկնաճեմ», եւ մահը սոսկ «անէացում է խաւար»՝

Թողէ՛ք զիս, նոնք, որ տխրագին

մեղանչեմ:

(«Ըսէ՛ք»)

Ինչպէս Սուրբ Գրքում է ասուում, իմացութեան կամ կենաց ծառի պտուղն ուտելը յանգեցնում է դրախտի կորստեան: Ասել է, թէ հարուստ կենսափորձը պատճառ է դառնում հոգու դրախտից մարդու վտարման՝ զարթնումի, արթնութեան, սթափ մտածողութեան: Սակայն մարդու բնոյթն այնպիսին է, որ նա ի գօրու չէ սանձելու սեփական մտքի վերալացումը, եւ, թերեւս, մարդու կեանքի իմաստը հենց իմացութեան աստիճաններով վեր ելնելն է եւ տիեզերքի անսահմանութիւնը պեղելը, ողջ անսահմանի կառոյցում իր տեղի ու դերի իմաստը հասկանալը: Այսինքն՝ զարթնումը բերում է անյուսութիւն, դրա համար էլ «տրտում գիտութեան» հասածը՝ Ինտրան, հետագայում կը զարմանայ թէ լուսառատ «Ներաշխարհը» երբեւէ ինքն է գրել:

Նարեկացիական երկփեղկման տառապանքի ծուատող ցաւը ծաւալուում է նաեւ նրա հոգում, եւ մեղանչման տենչի հեքանոսական ճիչը խեղդում է «Նոնաստանի» «Ջղջում» բանաստեղծութեան մէջ, որը հաւաքական հս-ի գղջման խօսք է: Նոնիները դառնում են «շիջեալ սերնդոց» քաւութեան, ապաշխարանքի, յոյսի խորհրդանիշ, որ կարկառուած են դէպի «Օրէնքն անանց»՝ դէպի՝ տիեզերական կարգ ու կանոնը, դէպի Քրիստոսը՝ որպէս «դուռ». «Ես եմ դուռը...» (Յովհ. Ժ 9): Նոնիները նաեւ նախկին մեղանչումների գիտակցութեամբ լեցուն հող դարձող ոսկորների անպատում թշուառութիւնը Անսահմանութեան մէջ լուծելու, Աստծուն ապաւինելու սիմվոլն են («Ջղջում»):

Պատարագի, քարոզի ժամանակ աւետարանական շատ էական հատուած

բացատրելիս բոլորի ուշադրութիւնը կենտրոնացւում է մի բառով՝ պրօսիտմէ, որ յունարէնից թարգմանաբար նշանակում է ուշադրութիւն: Համանուն սոնետում ամփոփուած է «Նոնաստանի» ողջ ասելիքը, նոնիներին սիմվոլը հարստանում է մի նոր ներբերանգով: Վերջին օրը՝ մահուան դէմադէմ, վեհատաւիդ օրհներգութիւններ՝ նոնիները, կը պատմեն իդձերի, վայելման ունայնութիւնը: Ունայն է անգամ մեղանչումը: Կը յիշեցնեն անհաս բարձունքների, չնուանուած իրերի տոչորոդ կարօտի մասին, սակայն աւերել է պէտք անգամ յուշն ու երազը: Ինտրան ճշմարիտ ուղի է տեսնում միայն կամֆի, ինքնասանձման յաղթանակով հլութեան տօնը, որով մարդը կարող է հոգու ամօթից մաքրուած ներկայանալ Անմատոյցին, Անսահմանին: Որպէս պրօսիտմէ-ուշադրութիւն՝ Ինտրան «ցուցադրում է» միակ ճիշտ ուղին. Անէին ձուլուելու միակ պայմանը ներքին մաքրութիւնն է («Պրօսիտմէ»):

Փիլիսոփայական սոնետների այս շարքը, որ «Նոնաստան» է կոչւում, մահ-կեանք-ցաւ-հաճոյք-երազանք-պատրանք տարածում կեանքի իմաստը որոնող հասուն անհատականութեան՝ ցաւից տառապող եւ դրանից դէպի պատրանքապաշտութիւն մղուող հոգու ապրումների գեղարուեստական քիւրեղացումն է: Նոնիներն իբրեւ սիմվոլ հանդէս են գալիս նոյն՝ «Ներաշխարհում» ունեցած դերով՝ խորհրդանշելով մարդու ինքնակատարելագործման տենչը եւ անմահութեան երազանքը: Սոնետների՝ երեսունչորս քիւրեղներից հիւսուած պսակում, իբրեւ երեսունչորս իւղաներկ կտաւների ամբողջութիւն, նոնիները դառնում են յետին

պլանում վեր խոյացող սիմվոլներ, որոնք համադրում են տիեզերական համատարած ֆայնայումն ու կենսածին գեղեցիկը եւ խորհրդանշում գեղեցիկի պաշտամունքը:

«Նոնաստան» XIX դարավերջին եւ XX դարասկզբին տարածուած էսթետիզմի, որպէս գրական հոսանք, յստակ հակուածութեամբ ժողովածու է, որտեղ պատրանքապաշտութիւնը բխում է էսթետիզմի այն սկզբունքից, թէ գեղեցիկը, վեր լինելով իրականութիւնից եւ բացարձակ, կարող է ձեւաւորել այդ իրականութիւնը: Թերեւս տեղին է մէջբերել էսթետիզմի հայրերից մէկի՝ Օ. Ուայլդի խօսքերը. «...Արուեստի իսկական նպատակը Ստի, այսինքն՝ հիասքանչ խաբկանքի մատուցումն է»:(6)

«Նոնաստան» «Ներաշխարհի» անմիջական շարունակութիւնն է՝ գերհասունացած ես-ի նոր աշխարհայեացքը, որում մահուան ցաւը մեղմւում է տիեզերական լոյսին ձուլուելու, հոգու խաղաղութեան հասնելու, Յաւերժի անսահմանութեան մէջ յարութիւն առնելու եւ տեսնելու երազանքի փորձով: Կեանքի եւ մահուան յարատեւ վերադարձի պտոյտը «Փոխում» սոնետում ներկայացուել է Վաղանցիկի եւ Անանցի միջեւ վեր յառնած սիմվոլիկ նոնիների բնանկարով, որ կազմում է ինտրայական մտածողութեանը բնորոշ սիլլոգիզմի առաջին եզրը, իսկ երկրորդ եզրը նոնիների ոտքերի տակ փռուած սնուցող հողն է՝ լի մարդկային մարմինների եւ անուրջների խոնարհ աճիւնով: Այդ աճիւններից Տիեզերքի մասնիկը՝ ես-ը ասես «ակնի՛ն կ'ընէ» (ոտքերի թաթերին կանգնած ձգուել)՝ հալուելու նոնիների մէջ եւ սլանալու եթեր. ահա եւ կեանքի ու մահուան յաւերժական գոյապտոյտի գեղարուեստական ձեւակերպումը:

Եթէ ամփոփելու լինենք

Ինտրայի *Խ-ի* հոգեբանական
զարգացման ընթացքը «Ներաշ-
խարհից» «Նոնաստան» ընկած
ճանապարհին, պետք է նշել, որ
նեբրին *Խ-ը* անցնում է կեանքի
ցուրի Գողգոթան, որից յանգում է
իրապաշտութեան, իրականութեան
պաշտամունքի՝ Թաթախուն սիրոյ

պատրանքով, սակայն է՛լ աւելի
իմաստանալով՝ զարթնելով, տա-
ռապում է կեանքի անցողիկութեան
այրող զգացումից՝ մահուան փաստի
գիտակցումից, որից փրկութիւն է
տեսնում նոր պատրանք-երազանքի՝
տիեզերական Անճառին ձուլուելու
արժանի լինելու յոյսի, անըջանքի
մէջ:

ՄԱՐԻԱՄ ՇՈՂԻՆԵԱՆ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

¹ Տնւ Ուիլիս Բ., Веселая наука (в книге “Утренняя заря. Переоценка всего ценного. Веселая наука”, Минск, 2003).

² Տնւ Փիֆաթոր, Золотой каюп. Բигуры эзотерики. Մ., 2004, սր. 275.

³ Տնւ Maslow A., Motivation and Personality. New York, Harper, 1970;

<http://www.atheism.about.com/library/glossary/general/bldef-maslowabraham.htm>;

<http://www.who2.com/abrahammaslow.html>

⁴ Զրաթյան Տ., Երկեր, Ե., 1981 թ., էջ 60 («Ներաշխարհ»): Այս գրքից հաջորդ մեջբերումների (կատարված են «Նոնաստան» շարքից) էջերը կարվեն տեղում:

⁵ Շանթ Լ., Երկեր, Ե., 1989, էջ 429:

⁶ Уайльд О., Замыслы, М., 1906, սր. 35.